ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ԳԱԳԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հոգեբանության փիլիսոփայական և մեթոդաբանական խնդիրների քննարկման ընթացքում հանդիպող կարևոր հարցերից է հետազոտության առարկայի խնդիրը: Ի՞նչ նյութի հիման վրա է հնարավոր հոգեբանության փիլիսոփայական և մեթոդաբանական հարցերի վերլուծությունը: Առաջնորդվելով «Գիտության փիլիսոփայությունն առանց գիտության պատմության դատարկ է, իսկ գիտության պատմությունն առանց գիտության փիլիսոփայության՝ կույր»[1] լակատոսյան կարգախոսով, կարելի է որպես հոգեբանության մեթոդաբանական հետազոտության առարկայական հիմք ընդունել հոգեբանության պատմությունը: Այստեղ, սակայն, մեկ այլ հարց է ծագում. հնարավո՞ր է արդյոք այնպիսի «հոգեբանության պատմություն», որը լիովին կբավարարի հոգեբանության մեթոդաբանական խնդիրների քննարկման հիմքին ներկայացվող պահանջները:

Բանն այն է, որ լակատոսյան կարգախոսը մի կողմից մատնանշում է գիտաբանական խնդիրների քննարկման համար պատմական նյութի կարևորությունը, մյուս կողմից վեր է հանում գիտության պատմության պայմանական բնույթը. *«Տեսական որոշակի կանխադրույթներից զերծ պատմությունն անհնարին է»*[2], «*Գիտության* պատմությունը որոշակի նորմատիվներով ընտրված և մեկնաբանված իրադարձությունների պատմություն է»[3]: Այս ամենից տրամաբանորեն բխում է, որ գիտության պատմության կառուցարկումն անմիջականորեն կախված է հետազոտողի տրամադրության տակ եղած նյութի քանակական և որակական բնութագրերից, հետազոտողի գիտական ճաշակից և տեսական դիրքորոշումներից:

Նման պարագայում հնարավոր չէ հստակորեն որոշել հոգեբանության պատմության շրջանակները: Ամենևին չի բացառվում, որ տեսությունների ու հայեցակարգերի «հոգեբանական» որակումը «հոգեբանության պատմություն» անվանումը կրող աշխատության մեջ

[1] **Лакатос И.** История науки и ее рациональные реконструкции // Избранные произведения по философии и методологии науки. М., 2008, с. 201.

[2] Նույն տեղում, էջ 236-237:

[3] Նույն տեղում, էջ 238:

դրանց ներառված լինելու հետևանք է: Եթե այդպես է, ապա հետազոտության շրջանակներից կարող են դուրս մնալ բազմաթիվ արժեքավոր, կարևոր ուսմունքներ, որոնք կա՛մ հայտնի չեն հեղինակին, կա՛մ նրա կողմից դիտարկվում են որպես ոչ հոգեբանական, կա՛մ միտումնավոր կերպով շրջանցվում են[4]: Ուրեմն, եթե որպես հոգեբանության պատմամեթոդաբանական հետազոտության առարկայական հիմք ընդունենք այս ձևով կառուցարկված «հոգեբանության պատմությունը», ապա ստիպված կլինենք առարկայի մեթոդաբանական հիմնավորման փոխարեն բավարարվել ընդամենն ընդունված ավանդույթով կամ ընդհանուր պայնավորվածությամբ: Ընդ որում, եթե առարկան սահմանվում է պայմանավորվածության, պատահականության կամ կամայականության հիման վրա, ապա հետազոտության արդյունքներն արտացոլում են ոչ այնքան հոգեբանական գիտելիքի պատմական զարգացման օրինաչափությունները, որքան *ընտրված* տեսությունների փոխհարաբերությունները: Պայմանավորված այն հանգամանքով, թե ինչպիսին կլինի հետազոտվող տեսությունների կազմը, հետազոտության արդյունքները կարող են տարբերվել:

Հասկանալի է, որ այս ձևով կառուցարկված «հոգեբանության պատմությունը» չի կարող հոգեբանության փիլիսոփայական և մեթոդաբանական խնդիրների քննարկման ամուր հիմք դառնալ: Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի հոգեբանության մեթոդաբանական խնդիրների քննարկման հիմքում ընկած հոգեբանության պատմությունը, ի՞նչ չափանիշների այն պետք է համապատասխանի: Առաջին հերթին դրա տվյալները պետք է լինեն առավելագույնս հավաստի: Այնուհետև այն պետք է լինի ամբողջական ու ավարտուն, և վերջապես՝ դրանում պետք է երևա հոգեբանության պատմական միասնությունը: Կարելի է ենթադրել, որ այս պայմանների իրականացման դեպքում «հոգեբանության պատմությունը» կվերածվի հոգեբանության մեթոդաբանական և փիլիսոփայական խնդիրների քննարկման անսասան հիմքի:

Արդյո՞ք իրականանալի են թվարկված պայմանները: Նախ անդրադառնանք պատմագիտական գիտելիքի հավաստիության խնդրին: Սկսենք առաջին հայացքից ինքնըստինքյան հասկանալի թվացող դատողությունից. պատմությունը գիտություն է անցյալում տեղ գտած իրադարձությունների մասին: Այդ անցյալը, սակայն, մահացած մնացորդ չէ, այն ինչ-որ կերպ *ներկայանում* է: «Մեծ մոլորություն կլինի ենթադրել, - գրում է Օտմար Շպանը, - թե անցյալն այլևս գոյություն չունի: Անցյալը դեռևս գոյություն ունի և դրա այդպիսին լինելը պատմության միակ հիմնավորումն է»[5]: Շպանի կարծիքով, այն, ինչը տեղ է գտել

---

[4] Այս մասին տե՛ս **Գ. Պետրոսյան,** «Հոգեբանության պատմություն» առարկայական ոլորտի ձևավորման հիմնահարցը // «Հոգեբանության դասավանդման ժամանակակից հիմնախնդիրները» միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութեր, Եր., 2007, էջ 108-113:

[5] **Шпанн О.** Философия истории. СПб., 2005, с. 41.

պատմության մեջ, չի մահանում: Պատմությունը կարող է լինել միայն այն պարագայում, երբ ներկայում առկա է անցյալը, և եթե անցյալը հանկարծակի կորցնի իր արդիականությունը, պատմությունը կդադարեցնի իր գոյությունը[6]:

Անցյալի ներկայությունը կարելի է հասկանալ երկու իմաստով: Մի դեպքում ներկան կարելի է դիտարկել որպես անցյալի հետևանք կամ շարունակություն: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ներկա պարունակում է անցյալը: Սակայն այդպիսի անցյալը ներկայանալով դադարում է գոյել որպես անցյալ՝ բառիս բուն իմաստով: Այն տարրալուծվում է ներկայի մեջ, վերափոխվում է ներկայի: Մյուս կողմից՝ բուն անցյալի ներկայությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ ներկայի որոշակի բովանդակություն պահպանում է իր անցյալական բնույթը, իրենով ներկայացնում է հենց անցյալը, հղում է անցյալին, վերարտադրում է անցյալը որպես այդպիսին:

Անցյալի ներկայության այս երկու ձևերի տարբերակումով է պայմանավորված «պատմություն» հասկացության երկիմաստությունը: ««Պատմություն» բառի մեջ, - գրում է Յանագիդա Կենձյուրոն, - կա առնվազն երկու նշանակություն. առաջին հերթին՝ օբյեկտիվ պատմությունը՝ որպես փաստ, և երկրորդ՝ հետազոտությունների հիման վրա այդ պատմության գրանցումը: Իհարկե, երբ խոսվում է պատմական գիտության մասին, նկատի է առնվում տվյալ եզրույթի երկրորդ նշանակությունը, թեև չի անտեսվում առաջինը, քանի որ գրանցված պատմության հիմքում պետք է ընկած լինի փաստերի պատմությունը՝ որպես դրա օբյեկտիվ նյութ: Եթե պատմությունը գրանցվի առանց այս հիմքի, այն կզրկվի իր՝ որպես պատմություն լինելու նշանակությունից»[7]:

Պարզ է, որ «պատմություն» եզրույթի այս երկու կողմերը սերտորեն փոխկապակցված են. դրանցից յուրաքանչյուրը պայմանավորում է մյուսի գոյությունը: Առանց պատմական գործընթացի չէր լինի «պատմություն» գիտությունը, որն իր հերթին գրանցում, նյութականացնում, վերակառուցում և ներկայացնում է պատմական գործընթացը՝ որպես իր իսկ հետազոտության առարկա և արդյունք: Ստացվում է, որ պատմությունը գիտություն է ոչ թե անցյալի կամ անցյալում տեղ գտած իրադարձությունների մասին, այլ ներկայի այն բաղադրիչների մասին, որոնք հղում են անցյալին, իրենցով ներկայացնում են անցյալը: Ընդ որում, պատմությունը՝ որպես օբյեկտիվ գործընթաց, ընդամենը պատմագիտական հետազոտության հիպոթետիկ արդյունք է, որն անմիջականորեն կրում է ներկայի ազդեցությունը: Եվ եթե ենթադրվող պատմական գործընթացը շարժվում է անցյալից դեպի ներկան, պատմագիտական հետազոտությունը շարժվում է ներկայից դեպի անցյալը: Ըստ այդմ՝ ոչ թե ներկան է գոյանում անցյալից, այլ ճիշտ հակառակը՝

---

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 42:

[7] **Кэндзюро Я.** Философия истории. М., 1969, с. 16.

անցյալը՝ ներկայից: Այս առումով հատկանշական է Ջորջ Հերբերթ Միդի կարծիքը: Նա նշում է, որ պատմական հետազոտության արդյունքների և դրանց վրա հիմնված կառուցարկման նշանակությունը տրվում է ոչ թե անցյալով, որտեղ տեղ են գտել հետազոտվող իրադարձությունները, այլ հայտնաբերվում է ներկայում և ապագայում. պատմական փաստերի մեկնաբանությունն անմիջականորեն կրում է ներկայի ազդեցությունը: Յուրաքանչյուր սերունդ և միևնույն սերնդին պատկանող առանձին մտածողներ հայտնաբերում են անցյալի տարբեր պատկերներ: «Քանի՞ տարբեր Կեսարներ են անցել Ռուբիկոնը՝ սկսած 1800 թվականից»[8], - հարցնում է Միդը:

Ստացվում է, որ պատմագիտական հետազոտությունում անցյալը վերակառուցվում է համաձայն ներկայի, կարծես ոչ թե ներկան է անցյալի շարունակությունը, այլ անցյալն է բխում ներկայից: Եվ ինչպես որ կան Ռուբիկոնն անցած բազմաթիվ Կեսարներ, նույն կերպ և ամեն սերունդ, յուրաքանչյուր հետազոտող ստեղծում է հոգեբանության իր պատմությունը: Կախված այն հանգամանքներից, թե ինչ կանխադրույթներից է բխում հետազոտությունը, թե որքան փաստեր կան պատմաբանի տրամադրության տակ, թե ինչպիսին է նրա վերաբերմունքը տվյալ պատմական փաստի հանդեպ, նա կարող է կառուցել անցյալի տարբեր պատկերներ: Բնական է, որ նման պայմաններում դժվար է խոսել պատմագիտական գիտելիքի հավաստիության մասին, քանի որ կարող ենք ունենալ պատմական գործընթացի կամ իրադարձությունների տարբեր մեկնաբանություններ՝ կախված «ներկայի» առանձնահատկություններից:

Այդուհանդերձ, գիտության պատմության դեպքում պատկերն էականորեն տարբերվում է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտության պատմության առարկան սկզբունքորեն զուրկ է տարածաժամանակային մոդուսից: Այսպես, եթե պատմագիտական հետազոտության առարկան Կեսարի կողմից Ռուբիկոնի անցումն է՝ որպես անցյալում տեղ գտած իրադարձություն, ապա հռոմեական կայսեր գործերի մասին մեզ հասած տարբեր վկայությունները հղելու են անցյալին՝ Կեսարի կյանքին և գործունեությանը: Այս դեպքում առաջ է գալիս «բնօրինակին» դրանց համապատասխանությունը ստուգելու անհրաժեշտություն (ինչը սկզբունքորեն անհնարին է, քանի որ «բնօրինակը» բոլոր դեպքերում ներկայանալու է որպես վկայություն): Սակայն եթե հետազոտության առարկան հենց կեսարագիտությունն է (եթե կարելի է այդպես ասել), ապա պատմական վկայությունները կարող են դիտարկվել առանց որևէ հղման: Այս դեպքում հետազոտության առարկա են դառնում Կեսարի կյանքին և գործունեությանը նվիրված պատմագիտական հետազոտությունները, որոնք, սակայն, դի-

[8] **Mead G. H.** History and the Experimental Method. // The Social Psychology of George Herbert Mead. The University of Chicago Press, 1956, p. 60-68.

տարկվում են ինքնըստինքյան, առանց որևէ հղումի: Դրանք ներկայացնում են միայն իրենց, ինչն ընդհանրապես հանում է դրանց հավաստիության, այսինքն՝ բնօրինակին համապատասխանության խնդիրը: Այս առումով կեսարագիտության պատմությունը հավաստիության տեսանկյունից գերազանցում է Կեսարի պատմությանը:

Թերևս կարելի է առարկել՝ ասելով, որ Կեսարին վերաբերող յուրաքանչյուր պատմագիտական աշխատություն նույնպես անցյալում տեղ գտած փաստ է, և որ կեսարագիտության պատմությունը պետք է անդրադառնա այդ աշխատությունների առաջացման ընթացքին, դրանց յուրահատկությունները պայմանավորող գործոններին: Իսկ ի՞նչ աղբյուրներից կարող ենք իմանալ այդ գործոնների մասին, ի՞նչ պատմական նյութի վրա հենվելով կարող ենք կառուցարկել այդ աշխատությունների առաջացման ընթացքը: Եվ ընդհանրապես՝ որքա՞ն է նպատակահարմար անդրադառնալ այդ խնդիրներին:

Այստեղ անհրաժեշտ է տարբերակել գիտության պատմություն շարադրելու երկու ձև: Դրանք ներկայումս հայտնի են որպես գիտության պատմության ինտերնալիստական և էքստերնալիստական ուղղություններ, սակայն դրանց ակունքները գնում են ավելի հեռու: Երկու մոտեցումների տարբերությունները պատկերելու նպատակով համեմատենք Արիստոտելի և Դիոգենես Լաերտիոսի շարադրանքները:

Որոշ հետազոտողների կարծիքով, հոգեբանության պատմություն գրելու առաջին փորձը պատկանում է Արիստոտելին[9]: Իհարկե, Արիստոտելի «Հոգու մասին» (Περί ψυχής) աշխատությունը մեզ հասած առաջին համակարգված գործն է, որտեղ սեփական տեսակետը ներկայացնելու նպատակով հեղինակը վերլուծում է հոգու բնույթի, էության, կառուցվածքի, նշանակության մասին իրեն նախորդած փիլիսոփաների կարծիքները: Այդուհանդերձ այդ կարծիքներն Արիստոտելի աշխատության մեջ չեն հղում անցյալին, դրանք ներկայի մասն են. սկզբունքորեն ոչ մի նշանակություն չունի, թե ինչ ժամանակահատված է ընկած Արիստոտելի և օրինակ՝ Անաքսագորասի միջև: Եվ ավելին, էական չէ նույնիսկ այն հանգամանքը՝ բաժանո՞ւմ է արդյոք ժամանակն Արիստոտելին և Անաքսագորասին: «Հոգու մասին» աշխատության մեջ միակ ուղղակի հղումն անցյալին Արիստոտելի խոսքերն են այն մասին, որ հոգու հետազոտության ընթացքում հանդիպող խնդիրների դիտարկման ընթացքում անհրաժեշտ է դիմել նախորդների կարծիքին՝ նրանցից փոխառելով ճշմարիտ ասվածն ու խուսափելով նրանց սխալներից[10]: Իսկ նախորդների կարծիքները դիտարկվում են դրանց պատմական համատեքստից դուրս, ուղղակի որպես քննարկվող հարցին տրվող լուծումների հնարավոր տարբերակներ:

Այս առումով Արիստոտելի աշխատությունից խիստ տարբերվում

---

[9] Տե՛ս **Klemm O.** A History of Psychology. New York, Chicago, Boston, 1914, էջ 8:

[10] Տե՛ս **Аристотель.** Сочинения в четырех томах. Т. 1, М., 1975, էջ 375:

է Դիոգենես Լաերտիոսի «Հռչակավոր փիլիսոփաների կյանքի, ուսմունքների և ասույթների մասին» աշխատությունը: Այստեղ ներկայացվում են տվյալներ, որոնք վերաբերում են փիլիսոփաների նախնիներին, նրանց ծննդյան տարեթվին, ուսումնառությանն ու ճանապարհորդություններին:

Իհարկե իր աշխատության մեջ Լաերտիոսը նույնպես անդրադառնում է փիլիսոփաների՝ տարբեր խնդիրներին վերաբերող հայացքներին: Այդուհանդերձ նրա շարադրանքն էականորեն տարբերվում է Արիստոտելի հղումներից: Երբ Լաերտիոսը գրում է, որ Անաքսագորասը պնդում էր, թե շարժման նախասկիզբը խելքն է (νοῦν), նա նկատի ունի, որ այդ պնդումն անում է կոնկրետ անձ, պատմական դեմք՝ Կլազոմենոսցի Հեգսիբուլոսի որդի Անաքսագորասը՝ ծնված LXX օլիմպիադային, մահացած LXXX-ին և այլն[11]: Ի տարբերություն դրա՝ երբ Արիստոտելն է խոսում Անաքսագորասի մասին՝ նշելով, որ նրա կարծիքով հոգին այն է, ինչ շարժում է, Արիստոտելը վերացարկվում է պատմական իրականությունից, քանզի այս դեպքում շեշտադրվում է տեսակետը, այլ ոչ թե այն արտահայտողը: Այդ է վկայում այն հանգամանքը, որ նույն հատվածում Արիստոտելը խոսում է նմանատիպ կարծիք արտահայտած ուրիշ *ինչ-որ մեկի* (αλλος) մասին՝ անգամ չնշելով նրա ինքնությունը[12]:

Ինչպես տեսնում ենք, հետազոտողի տրամադրության տակ եղած նյութը, կախված այդ իսկ նյութի բնույթից և հետազոտողի դիրքորոշումից, կարող է կիրառվել երկակի նշանակությամբ: Այստեղ ամենակարևորն այն համատեքստն է, որտեղ ներառվում է այդ նյութը: «Այսպես թե այնպես, - գրում է Միխայիլ Բարգը, - բոլոր ժամանակներում պատմություն գրելը նշանակել է «իրադարձությունների» տեղավորումը (նշանակությունների) համատեքստի մեջ, դրանց՝ որպես մասի և ամբողջի հարաբերակցումը»[13]: Այս առումով Արիստոտելի և Լաերտիոսի մոտեցումներն էականորեն տարբերվում են: Այդ տարբերությունը բխում է հենց համատեքստի բնույթից: Արիստոտելի պարագայում համատեքստն առարկայական է, այսինքն՝ փիլիսոփաների հայացքները միավորվում են շնորհիվ քննարկվող առարկայի ընդհանրության: Այստեղ համատեքստը կուռ կառույց չէ, որը նախորդում է այդտեղ ներառվող առանձին տարրերին, այլ կազմվում է առարկայի ընդհանրության հիման վրա տարրերի միավորման շնորհիվ: Արիստոտելի կողմից քննարկվող փիլիսոփաների հայացքների միավորման չափանիշը ներհատուկ է դրանցից յուրաքանչյուրին:

---

[11] Տե՛ս **Диоген Лаэртский.** О жизни, учениях и изречениях знаменитых философов. М., 1979, էջ 103:

[12] Տե՛ս **Аристотель.** Указ. соч., էջ 376, հմմտ. Aristoteles Psychology in Greek and English, with Introduction and Notes. Cambridge, At the University Press, 1882:

[13] **Барг М. А.** Эпохи и идеи: Становление историзма. М., 1987, с. 13.

Ի տարբերություն դրան՝ Լաերտիոսի պարագայում համատեքստը պատմական է (բառիս բուն իմաստով), այն տրվում է դրսից և նախորդում է համատեքստ ներառվող տարրերին: Դա ժամանակագրությունն է, աշխարհագրությունը, ժառանգականությունը (կենսաբանական և կրթական իմաստներով) կամ մեկ այլ ինչ-որ բան, որն անմիջականորեն տրված չէ փիլիսոփաների հայացքներում, և դրա մասին հնարավոր է իմանալ միայն այլ՝ արտաքին աղբյուրներից: Եթե փորձենք հավաստիության տեսանկյունից համեմատել Արիստոտելի և Լաերտիոսի «պատմությունները», ապա առաջինը զգալիորեն գերազանցում է երկրորդին, քանի որ դիտարկում է ավելի քիչ թվով փաստեր: Ընդ որում, այդ փաստերը չեն հղում մեկ այլ իրականության (բացառությամբ հոգու էությանը և բնույթին)՝ ի տարբերություն Լաերտիոսի կողմից դիտարկվող փաստերի: Արիստոտելի համար ըստ ամենայնի կարևոր է միայն հոգու մասին հնարավոր կարծիքների քննարկումը, անկախ այն հանգամանքից, թե ում որդին, երբ և որտեղ է դրանք արտահայտել (որոշ դեպքերում նույնիսկ չի կարևորվում կարծիքն արտահայտողի անձը): Եթե փորձենք այս երկու մոտեցումներն ինչ-որ կերպ անվանել, ապա որոշակի վերապահումով Արիստոտելի մոտեցումը կարելի է անվանել ինտերնալիստական, Լաերտիոսինը՝ էքստերնալիստական:

Ասվածից պարզ է դառնում, որ *գիտության, այդ թվում՝ հոգեբանության փիլիսոփայական և մեթոդաբանական խնդիրների հիմք հանդիսացող պատմությունը հավաստի լինելու համար պետք է լինի ինտերնալիստական:* Դժվար է հասկանալ գիտության այն պատմաբաններին, ովքեր փորձում են տեսության առաջացումը կապել հեղինակի կենսագրության, հասարակական և մշակութային միջավայրի առանձնահատկությունների հետ: Խոսքն ամենևին այդ գործոնների անկարևորության մասին չէ, այլ դրանց վերաբերյալ գիտելիք ստանալու ձևի և այդ գիտելիքի հավաստիության մասին: Չէ՞ որ նման ձեռնարկումը կարող է հանգեցնել թյուրիմացության, ինչպես, օրինակ, գիտության պատմության էքստերնալիստական ուղղության հիմքերում կանգնած Բորիս Գեսենի դեպքում է:

«Նյուտոնի մեխանիկայի սոցիալ-տնտեսական արմատները» զեկույցում[14] Գեսենը փորձում է վերլուծել Նյուտոնի գիտական աշխատությունների առաջացումն ու զարգացումը նրա կյանքի և գործունեության ժամանակաշրջանի հետ կապի մեջ՝ կիրառելով Մարքսի դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդը և պատմական գործընթացի հայեցակարգը[15]: Գեսենը ցույց է տալիս, որ Նյուտոնի, ինչպես նաև նրա ժամանակների ֆիզիկայի առջև ծառացած հիմնական խնդիրները բխում էին հաղորդակցման ուղիների, արդյունաբերության և ռազմա-

[14] Տե՛ս **Гессен Б. М.** Социально-экономические корни механики Ньютона. М.-Л., 1933:
[15] Տե՛ս նույն տեղը, էջ 4:

կան գործի պահանջներից[16]: Մյուս կողմից նա կարևորում է ժամանակաշրջանի գաղափարական մթնոլորտը՝ քաղաքական, իրավագիտական, փիլիսոփայական տեսություններն ու կրոնական հայացքները, դասակարգային պայքարի քաղաքական ձևերը [17]: Կարո՞ղ ենք արդյոք համոզված լինել, որ Գեսենի հետազոտությունը սպառում է նյուտոնյան մեխանիկայի առաջացման վրա ազդեցություն ունեցած բոլոր հնարավոր գործոնները: Բացի դրանից, ինչպե՞ս կարող ենք ստուգել, որ նշված գործոններից որևէ մեկի բացակայության դեպքում նյուտոնյան ֆիզիկան չէր լինի:

Գիտության էքստերնալիստական պատմագրությունը հանգեցնում է մեկ այլ թյուրիմացության ևս: Գեսենից կես դար անց բավականին հետաքրքիր հրապարակումով հանդես է գալիս Լորեն Գրահամը, որի՝ Բորիս Գեսենի մասին գրած հոդվածում կարդում ենք. «Ես կփորձեմ Բորիս Գեսենի նկատմամբ անել այն, ինչ Բորիս Գեսենը փորձում էր անել Իսահակ Նյուտոնի նկատմամբ, այն է՝ ցույց տալ, թե ինչպես է նրա գլխավոր աշխատությունն իր ակունքները գտնում քաղաքականության և տնտեսության մեջ»[18]: Կարելի՞ է արդյոք տեսականորեն բացառել այս շարքի՝ դեպի անվերջություն շարունակությունը: Չի բացառվում, որ որոշ ժամանակ անց մեկ այլ հետազոտող նույնատիպ վերլուծության ենթարկի հենց Գրահամի հոդվածը: Եվ այդպես շարունակ:

Ինչպես տեսնում ենք, գիտության պատմական կառուցարկման էքստերնալիստական մոտեցման հիմնական թերությունն այն է, որ այստեղ դիտարկվում է այնպիսի նյութ, որն անմիջականորեն տրված չէ դիտարկվող տեսությամբ: Այն վերցվում է այլ, կողմնակի աղբյուրներից, որոնց հավաստիությունը ստուգելը բավականին դժվար, եթե չասենք՝ անհնար է: Ընդ որում, այդ ճանապարհով ստացված տվյալները կարող են լրացվել, փոփոխվել, որը կփոփոխի նաև պատմական իրադարձության ընդհանուր պատկերը: Ըստ այդմ, կփոփոխվի նաև պատմության վրա հիմնվող գիտության փիլիսոփայությունը: Ստացվում է, որ տեսականորեն հնարավոր չէ սահմանել գիտության էքստերնալիստական պատմագրության սահմանները:

Մինչդեռ հոգեբանության պատմության առջև դրված երկրորդ՝ ամբողջականության և ավարտունության պայմանի իրականացման համար անհրաժեշտ են որոշակի սահմաններ: Իսկ ինչպե՞ս կարելի է իրականացնել այս պայմանը: Նախ՝ հարկ է նշել, որ խոսքն այստեղ ոչ թե գոյաբանական, այլ տրամաբանական ամբողջականության և ավարտունության մասին է: Իհարկե, քանի դեռ պատմության ընթացքը չի դադարել, այն չի կարող լինել ավարտուն և ամբողջական բառիս գո-

---

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 19:

[17] Տե՛ս նույն տեղը, էջ 31:

[18] **Graham L.R.** The Socio-Political Roots of Boris Hessen: Soviet Marxism and the History of Science. // Social Studies of Science, Vol. 15, № 4 (Nov., 1985), p. 706.

յաբանական իմաստով: Իսկ տրամաբանական առումով լիովին կարող է: Այս դեպքում պատմությունն իրականացածի մասին գիտությունից պետք է վերածվի նաև հնարավորի մասին գիտության: Չէ՞ որ պատմական փաստի միջոցով հետազոտողին բացահայտվում է հնարավորի պատմական իրականացումը: Փաստի բացակայությունը, սակայն, չի նշանակում հնարավորի պատմական իրականացման բացակայություն: Հիշենք թեկուզ 1945-ին պատահականորեն հայտնաբերված Նագ-Համադիի գնոստիկական տեքստերը կամ 1947-ին հայտնաբերված կումրանյան ձեռագրերը, որոնք արմատապես փոխեցին վաղ քրիստոնեության մասին պատմաբանների պատկերացումները: Չնայած դրան՝ այդ հայտնագործությունները որևէ արտակարգ բան չէին ներկայացնում և աստիճանաբար իրենց տեղը գտան կրոնի պատմության ընդհանուր խճանկարում՝ որոշակի փոփոխությունների ենթարկելով վերջինս: Խնդիրն այն է, որ եթե դրանք չգտնվեին, կրոնի պատմությունը կլիներ թերի, ոչ ամբողջական և անավարտ, ինչը, սակայն, մեզ չնչին չափով իսկ չէր անհանգստացնի, քանի որ այդ մասին մենք ուղղակի չէինք իմանա: Եվ որ ամենակարևորն է, այդ ձեռագրերի հայտնաբերման համար պարտական ենք պատահականությանը, այլ ոչ թե մեթոդաբանական նպատակաուղղված որոնումներին:

Ինչպես տեսնում ենք, միայն պատմաբանի տրամադրության տակ գտնվող պատմական նյութի (եթե անգամ այն հավաստի է) կիրառմամբ հնարավոր չէ կառուցել ավարտուն և ամբողջական «հոգեբանության պատմություն»: Նորանոր փաստերի բացահայտումն անընդհատ փոխակերպելու է «հոգեբանության պատմության», հետևաբար նաև՝ հոգեբանության տեսքը: Որպես հետևանք ամեն անգամ կառուցվելու են հոգեբանության նորացված փիլիսոփայություն և մեթոդաբանություն:

Ստեղծված իրավիճակից ելք է հուշում լակատոսյան՝ «Գիտության փիլիսոփայությունն առանց գիտության պատմության դատարկ է, գիտության պատմությունն առանց գիտության փիլիսոփայության կույր» վերոհիշյալ կարգախոսը: Ի՞նչ ծառայություն կարող է մատուցել հոգեբանության փիլիսոփայությունը հոգեբանության պատմությանը: Ինչպես նշվեց, առանց որոշակի սահմանափակումների հոգեբանության պատմագիտական հետազոտությունը չի կարող լինել ավարտուն և ամբողջական: Պատմությունը չի կարող գծել իր իսկ սեփական սահմանները: Այս հարցում նրան կարող է օգնել փիլիսոփայությունը, ավելի ճիշտ՝ փիլիսոփայությունը՝ որպես հնարավորի մասին գիտություն: Փիլիսոփայության այսպիսի սահմանում է տալիս Քրիստիան Վոլֆը: Նրա կարծիքով, փիլիսոփայությունը գիտություն է հնարավորի մասին այնքանով, որքանով դա հնարավոր է[19], կամ՝ «Փիլիսոփայությունը

[19] Տե՛ս **Wolff Ch.** Philosophia rationalis sive Logica, methodo scientifica pertracta et ad usum scientiarum atque vitae aptata. Praeimititur Discursus praeliminaris de philosophia in genere, Francofurti et Lipsiae: MDCCXXVIII/MDCCXXXII, § 29, էջ 13:

(Welt-Weisheit) գիտություն է բոլոր հնարավոր առարկաների մասին, թե ինչպես և ինչու են դրանք հնարավոր»[20]:

Հոգեբանության մեթոդաբանական խնդիրների քննարկման ընթացքում փիլիսոփայության՝ որպես հնարավորի մասին գիտության կիրառմամբ կարելի է ուրվագծել հոգեբանության պատմության շրջանակները: Հետազոտելով այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հոգեբանության հնարավորության, հոգեբանության հնարավոր կերպերի, հոգու և մարմնի կապի հնարավոր տարբերակների, մտածողության և դրա մասին գիտելիքի հնարավորության խնդիրները, կարելի է կառուցել տրամաբանական մատրիցային այնպիսի ցանց, որի առանձին վանդակները կարող են բովանդակություն ստանալ պատմական նյութի հետազոտությամբ: Ընդ որում, այդ խնդիրների վերլուծությունն իր հերթին կարող է հիմնվել հոգեբանության պատմության վրա: Այս պարագայում հոգեբանության պատմությունը և հոգեբանության փիլիսոփայությունը փոխլրացնող են. հոգեբանության պատմությամբ տրվում են իրականացած հնարավորությունները, հոգեբանության փիլիսոփայությամբ՝ հնարավորություններն ընդհանրապես: Եվ եթե ինչ-որ հնարավոր տարբերակ չի հաստատվում պատմագիտական հետազոտությամբ, դա դեռևս չի նշանակում, որ այն անհնարին է կամ ուղղակի չի իրականացել: Չի բացառվում, որ դրա պատճառը պատմական նյութի անհասանելիությունն է, կամ այն, որ տվյալ հետազոտությունն իր ժամանակներում չի հասել զգալի հաջողությունների և չի հրապարակվել: Չէ՞ որ գիտության պատմությունը մեծ մասամբ գործ ունի քիչ թե շատ հաջողակ տեսությունների հետ:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ *տրամաբանորեն ավարտուն և ամբողջական հոգեբանության պատմությունը պետք է ներառի բոլոր հնարավոր հոգեբանական տեսությունները կամ գոնե հոգեբանության հիմնական փիլիսոփայական հարցերի բոլոր հնարավոր պատասխանները՝ անկախ դրանց իրականացված կամ որպես պատմական փաստ ներկայացված լինելու չափանիշից:* Այսպիսի հոգեբանության պատմության ընդհանուր կառույցն ավելի քիչ է ենթակա փոփոխության:

Հոգեբանության պատմության մեթոդաբանական հաջորդ խնդիրը հոգեբանության պատմական միասնության խնդիրն է, որն անմիջականորեն կապված է գիտական տեսությունների անհամաչափելիության դրույթի հետ, որով ընդհանուր առմամբ պնդում է արվում, որ գիտական եզրույթների և հասկացությունների նշանակությունը հաճախ փոփոխվում է այն տեսության զարգացմանը զուգահեռ, որից բխում է: Այդպիսի փոփոխությունների դեպքում անհնար է սահմանել մի տե-

[20] **Wolff Ch.** Vernünftige Gedanken von den Kräften des menschlichen Verstandes und ihrem richtigen Gebrauch in Erkenntnis der Wahrheit. Vorbericht von der Welt-Weisheit, §.1. Halle im Magdeburgischen, 1712/1754, p. 1.

սության բոլոր եզրույթները՝ կիրառելով մյուս տեսության բառապաշարը[21]:

Հոգեբանության պատմության համար տեսությունների անհամաչափելիության դրույթն անշուշտ ունի առաջնային նշանակություն: Այն դրսևորվում է ինչպես հոգեբանական գիտելիքի պատմական ձևերի համադրության և համեմատության, այնպես էլ միևնույն ժամանակաշրջանում գոյակցող հոգեբանական տեսությունների միավորման փորձի ընթացքում: Ընդ որում, անհամաչափելիության դրույթը դժվարացնում է հոգեբանության պատմագիտական հետազոտությունը և հոգեբանության միավորման փորձերը՝ դնելով որոշակի սահմանափակումներ: Ինչպե՞ս կարելի է, օրինակ, միևնույն դաշտում դիտարկել Կասմանի՝ «հոգեբանությունը՝ որպես գիտություն հոգու մասին»[22] և Լանգեի՝ «առանց հոգու հոգեբանությունը»[23]: Արդյո՞ք Կասմանի և Լանգեի կիրառած «հոգեբանություն» հասկացությունն ունի միևնույն նշանակությունը: Ակնհայտ է, որ ոչ: Այդ դեպքում ինչպե՞ս կարելի է համադրել կամ թեկուզ համեմատել «հոգու մասին գիտություն» հոգեբանությունն «առանց հոգու» հոգեբանության հետ: Այստեղ հնարավոր չէ անգամ խոսել դրանց համաչափելիության կամ անհամաչափելիության մասին, քանի որ դրանք ոչ միայն բովանդակային առումով փոխանցելի չեն, այլև տրամաբանորեն փոխբացառող են: Դրանք, ըստ էության, տարբեր գիտական բնագավառներ են:

Եթե առաջնորդվենք տեսությունների անհամաչափելիության դրույթով, ապա ստիպված կլինենք հրաժարվել հոգեբանության միասնական պատմությունից և բավարարվել հոգեբանության առանձին ուղղությունների պատմություններով: Այդուհանդերձ, կասկած է հարուցում հենց անհամաչափելիության դրույթի հիմնավորվածությունը: Բանն այն է, որ իր աշխատություններում Կունը փորձում է անհամաչափելիության դրույթը հիմնավորել գիտության պատմությունից վերցված օրինակներով: Նա դիտարկում է արիստոտելյան և նյուտոնյան «ֆիզիկաները»[24], 18-րդ և 20-րդ դարերի «քիմիաները»[25]: Իսկ ի՞նչ հիմքերով է Կունը համեմատում 18-րդ և 20-րդ դարերի քիմիայի հայեցակարգերը կամ Արիստոտելի և Նյուտոնի ֆիզիկական աշխատությունները, այլ ոչ թե, օրինակ, արիստոտելյան մետերեոլոգիկան և ժամանակակից կիբերնետիկան: Միակ հնարավոր պատասխանը թերևս այն է, որ Կունը համեմատվող հայեցակարգերը դիտում է որպես մեկ

---

[21] Տե՛ս **Кун Т.** Соизмеримость. Сравнимость. Коммуникативность. // После «Структуры научных революций». М., 2014, էջ 46-47:

[22] **Casmanus O.** Psychologia anthropologica sive Animae Humanae Doctrina… Hanoviae, MDXCIV, p. 21-22.

[23] **Ланге Ф. А.** История материализма и критика его значения в настоящем. Том второй. История материализма со времени Канта. Киев, Харьков, 1900, с. 233.

[24] Տե՛ս **Кун Т.** Что такое научные революции? // **Кун Т**. После «Структуры научных революций», էջ 19-45:

[25] Տե՛ս, օրինակ՝ **Кун Т.** Соизмеримость. Сравнимость. Коммуникативность, էջ 59-61:

պատմական ամբողջի մասեր, այսինքն՝ նա կանխավ ունի միասնական ֆիզիկայի կամ քիմիայի մասին որոշակի պատկերացում: Ստացվում է, որ տեսությունների անհամաչափելիության դրույթը հիմնվում է գիտակարգի՝ ֆիզիկայի, քիմիայի և այլն, պատմական միասնության կանխադրույթի վրա:

Այդ միասնությունը, ըստ ամենայնի, բխում է այն իրականության ընդհանրությունից, որին վերաբերում են տարբերվող, երբեմն նույնիսկ անհամաչափելի տեսությունները: Ֆիզիկան, օրինակ, գործ ունի համակարգերի և դրանց չներթափանցող հարաբերությունների հետ, մինչդեռ քիմիայի շրջանակներում դիտարկվում են այդ համակարգերի ներթափանցող հարաբերությունները: Դրանից հետևում է, որ թեև անհամաչափելիության սկզբունքի հետևանքները հարաբերապաշտական են, բայց դրա հիմքում ընկած կանխադրույթներն այնուամենայնիվ ռեալիստական են:

Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ գիտության պատմության միասնությունն ապահովվում է տվյալ գիտությամբ ներկայացվող իրականությամբ: Այդ իրականությունը ենթադրական է, հիպոթետիկ և չի տրվում որևէ առանձին տեսությամբ կամ հայեցակարգով: Այն գոյանում է հնարավորությունների համադրմամբ և պարունակում է բոլոր հնարավորությունները: Այսպես, հոգեբանության՝ որպես հոգու մասին գիտության և «առանց հոգու» հոգեբանության միջև կապ ապահովողը հենց հոգեբանությունն է, բայց ոչ Կասմանի, Լանգեի կամ մեկ ուրիշի սահմանած հոգեբանությունը: Այդ հոգեբանությունն ընդամենը հնարավորությունների ամբողջություն է, հանրագումար, որի դրսևորումներից մեկը հոգեբանությունն է՝ որպես հոգու մասին գիտություն, մյուսը՝ առանց հոգու հոգեբանությունը, երրորդը՝ հոգեբանությունը՝ որպես վարքի մասին գիտություն և այլն: Նման իրականության ընդունումը հոգեբանության պատմական միասնության ապահովման կարևոր պայման է:

Ինչպես տեսնում ենք, սկզբունքորեն հնարավոր է կառուցարկել այնպիսի «հոգեբանության պատմություն», որը կդառնա հոգեբանության փիլիսոփայական և մեթոդաբանական խնդիրների քննարկման հիմք: Այդ նպատակով գրվող «հոգեբանության պատմությունը» պետք է միտված լինի հոգեբանության ներքին պատմությանը (լինի ինտերնալիստական), դիտարկի ինչպես իրականացած, այնպես էլ հնարավոր տարբերակներ, ընդունի հոգեբանական տեսություններն ու հայեցակարգերը միավորող իրականության առկայությունը (լինի ռեալիստական):

Բանալի բառեր – *պատմություն և անցյալ, պատմական գիտելիքի հավաստիություն, «պատմության» ավարտունություն և ամբողջականություն, հոգեբանության պատմական միասնություն*

ГАГИК ПЕТРОСЯН – З*начение и границы истории психологии.* – Обсуждение философских и методологических вопросов психологии опирается на «историю психологии», которая обеспечивает содержательный базис такого рода исследований. Однако не всякая история психологии способна справиться с подобной задачей. Какая именно должна лежать в основе философских и методологических исследований? В статье рассматриваются критерий и возможности реконструировать эффективную историю психологии.

Ключевые слова: *история и прошлое, достоверность исторического знания, законченность и целостность «истории», историческое единство психологии*

GAGIK PETROSYAN – *The Purpose and Boundaries of the History of Psychology.* – The discussion of philosophical and methodological issues of psychology based on the history of psychology which provides the substantial basis of such researches. However, not every “history of psychology” can handle these tasks. How should be the "history", which underlies the philosophical and methodological researches? The article discusses the criterion and possibility of reconstructing the effective history of psychology.

Key words: *history and past, reliability of historical knowledge, completeness and integrity of history, historical unity of psychology*